

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ 2016Թ.-Ի  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ N 1-09/16 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արձանագրություն N 1-09/16**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2016 թ.-ի սեպտեմբերի 20-ի  
նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ., դասախոս), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Հ. (տ.գ.դ., դոցենտ), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Զաքարյան Գ.Է. (ուսխորհրդի նախագահ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ., դոցենտ), Մուսայելյան Վ.Ս., Շահբաջյան Ա.Վ.

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ):

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

- 1.Մագիստրոսական թեզերի թեմաների մասին.
- 2.ՄՄԿԾԿ-ում կուրսղեկների գործունեության կարգի նախագծի մասին.
- 3.Ուսումնափորձարարական հողամասում հետազոտական աշխատանքներ կատարելու մասին.
- 4.Այլ հարցեր.

**Լսեցին 1-** Լսելով և քննարկելով մագիստրոսական թեզերի թեմաների մասին ՇՏՀ ռեկտոր՝ Հ.Թոքմաջյանի հաղորդումը ռեկտորատը որոշում է.

**Որոշեցին 1-**Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին քննարկել և մինչև սեպտեմբերի 30-ը գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել ըստ խմբերի կամ անհատական բաշխված մագիստրոսական թեզերի թեմաները, կատարողների ցանկը և ղեկավարների կազմերը:

**Լսեցին 2-**Ռեկտորատի քննարկմանը ներկայացվեց ՄՄԿԾԿ-ում կուրսղեկների գործունեության կարգի նախագիծը (զեկուցող՝ Հ.Թոքմաջյան):

**Որոշեցին 2-**Հավանություն տալ ՄՄԿԾԿ-ում կուրսղեկների գործունեության կարգի նախագծին և այն ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

**Լսեցին 3-**Պրոռեկտոր՝ Ս.Գալստյանը ներկայացնելով ուսումնափորձարարական հողամասում իրականացվելիք հետազոտական աշխատանքների անհրաժեշտությունը, նշեց, որ ագրոնոմիական և դրան օժանդակող մասնագիտությունների մագիստրոսական թեզերի կատարումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, հաշվի առնելով նաև գետամերձ տարածքի բարենպաստ միկրոկլիման հատապտուղների աճեցման համար, հողամասը նախապատրաստվել է ազնվամորու պլանտացիա ստեղծելու համար: Դաշտը նախօրոք ազատվել է արժեք չներկայացնող ծառաբույսերից ու մացառներից, հարթեցվել և պարարտացվել է 60տ/հա-ի հաշվով գոմաղբով, ապա հերկվել է 27-30սմ խորությամբ: Նախատեսվում է տնկել ազնվամորու տարբեր սորտեր, տարբեր տնկման սխեմաներով, որը հարուստ

փորձարարական բազա կհանդիսանա գիտական տարբեր բնույթի փորձարկումների համար:

**Արտահայտվեցին**-Հ.Թոքմաջյան, Վ.Մուսայելյան: Հավանություն տալով ուսումնափորձարարական հողամասում կատարվող աշխատանքների ընթացքին, առաջարկեցին հսկողությունը հանձնարարել «Ագրոնոմիայի» ամբիոնին:

**Որոշեցին 3**-Հավանություն տալ ուսումնափորձարարական հողամասում իրականացվող հետազոտական աշխատանքների ընթացքին և պատշաճ մակարդակ ապահովելու նպատակով հսկողությունը հանձնարարել «Ագրոնոմիայի» ամբիոնին:

**Լսեցին 4.1**-Այլ հարցերի շրջանակներում քննարկվեց «Ագրոնոմիայի» ամբիոնի կ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Ա.Գուլյանի ուսումնափորձարարական հողամասի մոլախոտային բույսերի սերմերով բարձր վարակվածության դեմ տարվող ագրոտեխնիկական և քիմիական պայքարի մեթոդները հետազոտության նյութ դարձնելու առաջարկը:

**Որոշեցին 4.1**-Հավանություն տալ «Ագրոնոմիայի» ամբիոնի կ.գ. դոկտոր-պրոֆեսոր՝ Ա.Գուլյանի առաջարկին և հետազոտական աշխատանքներում ներառել նաև մոլախոտվածության դեմ պայքարի եղանակների ուսումնասիրումը:

**Լսեցին 4.2**-Քննարկվեց ազնվամորու պլանտացիայի հիմնման աշխատանքները արագացնելու և սեփական պտղատնկարան ստեղծելու ռեկտոր՝ Հ.Թոքմաջյանի առաջարկը:

**Որոշեցին 4.2**-Հանձնարարել պրոռեկտոր՝ Ս.Գալստյանին ազնվամորու պլանտացիայի ստեղծման նպատակով ՀՀ-ից ձեռք բերել պահանջվող շուրջ 5000 տնկի, իսկ մոտ ապագայում հանրապետությունում առավել տարածված մերձարևադարձային պտղատեսակների տնկիներ արտադրելու և հողօգտագործողներին տրամադրելու համար ներկայացնել պտղատնկարան հիմնադրելու ծրագիր:

**Լսեցին 4.3**-Քննարկվեց փորձահողամասը էլեկտրաէներգիայով ապահովելու և ուսումնաօժանդակ կառույցը վերանորոգելու անհրաժեշտության մասին տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ՝ Վ.Մուսայելյանի առաջարկը:

**Որոշեցին 4.3**-Հանձնարարել տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ՝ Վ.Մուսայելյանին հետազոտել և քննարկման ներկայացնել նվազագույն ծախսումներով փորձահողամասը էլեկտրաէներգիայով ապահովելու և ուսումնաօժանդակ կառույցը վերանորոգելու ծրագիր:

**Լսեցին 4.4**-Քննարկվեց «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի կայքէջի տեխնիկական սպասարկումը ապահովելու մասին 2011թ.-ի սեպտեմբերի 20-ի N 002-Ն գրությունը:

**Արտահայտվեցին**-Հ.Թոքմաջյան: Առաջարկվեց օժանդակել «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին, միաժամանակ օգնության կարգով նվիրաբերել ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի «Համատեղ գործունեության պայմանագրի» շրջանակներում ձեռք բերած հինգ մետաղյա չհիրկիզվող պահարաններից մեկը:

**Որոշեցին 4.4-**Հանձնարարել հետազոտական և գիտակրթական կենտրոնի ղեկավար՝ Վ.Թորքմաջանին օժանդակել «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի կայքի արդիականացման աշխատանքներին:

- Հանձնարարել տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ՝ Վ.Մուսայեյանին «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամին նվիրաբերել ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի «Համատեղ գործունեության պայմանագրի» շրջանակներում ձեռք բերած հինգ մետաղյա չհիրկիզվող պահարաններից մեկը:

**Նախագահ՝** ստորագրություն  
**Քարտուղար՝** ստորագրություն

**Հ.Վ.Թորքմաջան**  
**Ա.Ա.Առաքեյան**